



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Հ Ր Ա Մ Ա Ն

02 հուլիսի 2009 թվական N^o 51-Ա

ք. Երևան

**ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՒՄ ԹԵՎ ԳԻԾ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԱՅԳ ԵՂԱՆԱԿՈՎ ՍՏԱՅՎԱԾ
ԳԻՄՈՒՄ-ԲՈՂՈՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ, ԳՐԱՆՑՄԱՆ, ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ
ՏՐԱՍՏԳՐՄԱՆ ԵՎ ԱՄՓՈՓՄԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով) ներկայացված դիմում-բողոքների քննարկման արդյունավետությունը բարձրացնելու և գործունեության թափանցիկությունն ապահովելու նպատակով,

հիմք ընդունելով «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի առաջին մասի «բ» և «է» կետերը

հրամայում եմ

1. Հաստատել Հանձնաժողովում թեժ գիծ ստեղծելու և այդ եղանակով ստացված դիմում-բողոքների ընդունման, գրանցման, տեղեկատվության տրամադրման և ամփոփման կարգը՝ համաձայն հավելված 1-ի, ինչպես նաև թեժ գծի միջոցով ստացված դիմում-բողոքների հաշվառման և տեղեկատվության տրամադրման վերաբերյալ գրառումների մատյանի ձևը՝ համաձայն հավելված 2-ի:

2. Հանձնաժողովի աշխատակազմի ղեկավարին և Հանձնաժողովի նախագահի մամուլի քարտուղարին՝ հնգօրյա ժամկետում Հանձնաժողովի ինտերնետային կայքի, ինչպես նաև քաղաքացիների համար մատչելի վայրում տեղադրման միջոցով ապահովել սույն հրամանի մասին հանրությանն իրազեկումը:

3. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահում եմ ինձ:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

Ա. Շահնազարյան

Հավելված N 1
ՀՀ տնտեսական մրցակցության
պաշտպանության պետական հանձնաժողովի
նախագահի
2009 թվականի հուլիսի 2-ի
թիվ 51 -Ա հրամանի

ԿԱՐԳ

ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՅԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՒՄ ԹԵՎ ԳԻԾ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԱՅԳ ԵՂԱՆԱԿՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԳԻՄՈՒՄ-ԲՈՂՈՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ, ԳՐԱՆՑՄԱՆ, ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ ԱՍՓՈՓՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովում (այսուհետ՝ Հանձնաժողով) թե՛ գիծ ստեղծելու և այդ եղանակով ստացված դիմում-բողոքների ընդունման, գրանցման, տեղեկատվության տրամադրման և ամփոփման հետ կապված հարաբերությունները:

2. Հանձնաժողովում բանավոր դիմում-բողոքների ընդունման նպատակով գործում է թե՛ գիծ՝ 54-39-85 անվճար հեռախոսահամարով:

3. Թե՛ գծի միջոցով ստացված դիմում-բողոքների ընդունման, գրանցման, տեղեկատվության տրամադրման և ամփոփման աշխատանքների իրականացումն ապահովում է Հանձնաժողովի աշխատակազմի վարչատնտեսական վարչության համապատասխան աշխատակիցը՝ վարչության պետի հանձնարարությամբ (այսուհետ՝ Հանձնաժողովի համապատասխան աշխատակից):

4. Հանձնաժողովի համապատասխան աշխատակիցը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժամը 14:30-ից մինչև 16:30-ը, իրականացնում է հեռախոսակապով ստացվող դիմում-բողոքների ընդունումն ու գրանցումը:

5. Հանձնաժողովի համապատասխան աշխատակիցը, հեռախոսակապի միջոցով ստանալով դիմում-բողոքը (այսուհետ նաև՝ դիմում), թե՛ գծի միջոցով ստացված դիմումների հաշվառման և տեղեկատվության տրամադրման վերաբերյալ գրառումների մատյանում գրանցում է դիմողի անունը, ազգանունը (իրավաբանական անձի անունից հանդես գալու դեպքում՝ նաև իրավաբանական անձի անվանումը, դիմող պաշտոնատար անձի պաշտոնը), հասցեն և հեռախոսահամարը, և, հարցումը լսելուց անմիջապես հետո, պատասխանում է նրան կամ պատասխանելու համար հեռախոսը փոխանցում (միացնում) Հանձնաժողովի իրավասու այլ աշխատակցի (այսուհետ՝ իրավասու աշխատակից): Դիմումի պատասխանի տրամադրումից հետո մատյանում նշվում է նաև դիմումի և դրա պատասխանի ներկայացման օրը և ժամը, ինչպես նաև դրանց հակիրճ բովանդակությունը:

6. Դիմումին պատասխանելու համար լրացուցիչ ուսումնասիրության կամ ճշգրտման անհրաժեշտություն առաջանալու դեպքում, Հանձնաժողովի համապատասխան կամ

իրավասու աշխատակիցն, անմիջապես, հեռախոսով, դիմողին տեղյակ է պահում, թե ինչ ժամանակահատվածում կտրամադրվի պատասխանը, բայց ոչ ուշ, քան դիմումի ստացման պահից սկսած հինգ ժամվա ընթացքում: Տվյալ աշխատանքային օրվա ավարտից մինչև երեսուն րոպե առաջ ստացված դիմումի վերաբերյալ պատասխանն, ըստ անհրաժեշտության, դիմողին կարող է տրվել ոչ ուշ, քան մինչև դրան հաջորդող աշխատանքային օրվա ժամը 11:30-ը:

7. Թեժ գծի միջոցով ստացված դիմումին պատասխան չի տրվում՝

ա) եթե դիմողը չի հայտնում սույն կարգի 5-րդ կետում նշված տվյալները.

բ) դիմումը բավարարում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պահանջներին, որի դեպքում տվյալ դիմումի վերաբերյալ տեղեկատվություն տրամադրող Հանձնաժողովի աշխատակիցն, անմիջապես, դիմողին տեղեկացնում է սահմանված կարգով դիմում կամ բողոք ներկայացնելու հնարավորության մասին.

գ) եթե դիմումը վերաբերում է այնպիսի տեղեկատվության, որի տրամադրումը վճարովի է:

8. Հանձնաժողովի համապատասխան աշխատակիցը, թեժ գծով ստացված դիմումների բնույթի և թվի վերաբերյալ կազմում է ամփոփ տեղեկանք, և, այն, յուրաքանչյուր ամսվա 1-ին և 15-ին, ներկայացնում Հանձնաժողովի նախագահին և աշխատակազմի ղեկավարին: Տեղեկանքը ստորագրվում է նաև Հանձնաժողովի աշխատակազմի վարչատնտեսական վարչության պետի կողմից:

Հավելված N 2
 ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության
 պետական հանձնաժողովի նախագահի
 2009 թվականի հուլիսի 2-ի
 թիվ 51 -Ա հրամանի

ՁԵՎ

թեժ գծի միջոցով ստացված դիմում-բողոքների հաշվառման և տեղեկատվության տրամադրման վերաբերյալ
 գրառումների մատյանի

Հ/Հ	Դիմում-բողոքի ներկայացման օրը, ժամը	Դիմողի անունը, ազգանունը (իրավաբանական անձի անունից հանդես գալու դեպքում՝ իրավաբանական անձի անվանումը, դիմող պաշտոնատար անձի պաշտոնը)	Դիմողի հասցեն, հեռախոսահամարը	Դիմում- բողոքի հակիրճ բովանդակություները	Դիմում-բողոքի պատասխանի հակիրճ բովանդակությունը	Դիմում-բողոքի պատասխանի ներկայացման օրը և ժամը	Դիմում-բողոքի պատասխանը տրամադրող Հանձնաժողովի աշխատակցի անունը, ազգանունը և ստորագրությունը
1							
2							
3							
4							